Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-1095³-02.06.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 29. Պետական գույքի վարձակալությունը

1. Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմի, պետական կառավարման համակարգի մարմինների, Համայնքների, Հայաստանի Հանրապետության մարզպետերի աշխատակազմերի, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմի, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի, Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայության, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի աշխատակազմի, Հանրապետության քննչական կոմիտեի, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Հայաստանի

Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպություններից վերակազմակերպված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամների կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամների գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանված կարգով վարձակալած անշարժ գույքից:

2. Պետական գույքի վարձակալության տրամադրման կարգը եւ վարձավճարների հաշվարկման, ինչպես նաեւ պետական կառավարման համակարգի մարմինների եւ պետական ոչ առեւտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար պետական սեփականություն հանդիսացող տարածքով ապահովման կամ դրա բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման կարգերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով պետական գույքը վարձակալությամբ կարող է տրամադրվել՝

1) Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմին, պետական կառավարման համակարգի մարմիններին, Համայնքներին, Հայաստանի Հանրապետության մարզպետերի աշխատակազմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին, Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի

աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովին եւ Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին.

2) պետական կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություններին.

3) 100 տոկոս պետական մասնակցությամբ առեւտրային կազմակերպություններին եւ հիմնադրամներին.

4) ֆիզիկական եւ իրավաբանական անձանց:

4. Պետական գույքը վարձակալության է տրամադրվում հետեւյալ եղանակներով.

1) հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (նաեւ էլեկտրոնային).

2) ուղղակի եղանակով:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «եւ հիմնադրամներին» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ պետական ոչ առեւտրային կազմակերպություններից վերակազմակերպված եւ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին.)» բառերը:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման

կոմիտեն պարտավոր է սույն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման գործընթացը կանոնակարգող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 3-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի կառավարման մասին» 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 29. Պետական գույքի վարձակալությունը

1. Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմին, պետական կառավարման համակարգի մարմիններին, Համայնքներին, Հայաստանի Հանրապետության մարզպետերի աշխատակազմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին, Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի աշխատակազմին, Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային

կազմակերպությունների, պետական ոչ առևտրային կազմակերպություններից վերակազմակերպված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամների կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին գույքը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության Կկառավարության սահմանված կարգով վարձակալած անշարժ գույքից:

2. Պետական գույքի վարձակալության տրամադրման կարգը և վարձավճարների հաշվարկման, ինչպես նաև պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար պետական սեփականություն հանդիսացող տարածքով ապահովման կամ դրա բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքները վարձակալությամբ ձեռքբերման կարգերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով պետական գույքը վարձակալությամբ կարող է տրամադրվել՝

1) Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմին, պետական կառավարման համակարգի մարմիններին, Համայնքներին, Հայաստանի Հանրապետության մարզպետերի աշխատակազմերին, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատին, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեին, Հայաստանի Հանրապետության Պետական վերահսկողական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության դատախազությանը, Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների

պաշտպանի աշխատակազմին, Հայաստանի Հանրապետության մրցակցության պաշտպանության հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին.

2) պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին.

3) 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին.

4) ֆիզիկական և իրավաբանական անձանց:

4. Պետական գույքը վարձակալության է տրամադրվում հետևյալ եղանակներով.

1) հրապարակային սակարկություններով (մրցույթ կամ աճուրդ (նաև էլեկտրոնային).

2) ուղղակի եղանակով:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «և հիմնադրամներին» բառից հետո լրացնել «(բացառությամբ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններից վերակազմակերպված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հիմնադրամներին.)» բառերը:

Հոդված 3. ~~Եզրափակիչ և~~ Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. ~~Ս~~ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է սույն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև ~~2026 թվականի հունվարի 10-ը~~ 2026 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման գործընթացը կանոնակարգող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~2026 թվականի հունվարի 10-ից~~ 3-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1095-02.06.2025-ՏՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»				
1.	**Կառավարություն**	1-ին, 2-րդ հոդվածներ	1. 1-ին, 2-րդ հոդվածների 1-ին մասերում՝ Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 5-րդ և 5.1-ին հոդվածներում (նաև Օրենքի 5-րդ հոդվածում) կիրառված «կազմակերպությանն անժամկետ» ձեւակերպումն՝ առաջարկում ենք վերանայել՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ «2. Գույքի անհատույց օգտագործման	Ընդունվել է:	Ընդունվել է:

			պայմանագրի նկատմամբ համապատասխանաբար կիրառվում են սույն օրենսգրքի 608 հոդվածով, 612 հոդվածի 1-ին կետով և 2-րդ կետի առաջին պարբերությամբ, 617 հոդվածով, 624 հոդվածի 2-րդ կետով, 626 հոդվածի 1-ին և 3-րդ կետերով սահմանված կանոնները:»: Ըստ այդմ 1-ին և 2-րդ հոդվածների 1-ին մասերում ՝ «կազմակերպությանն անժամկետ» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «կազմակերպությանը պայմանագրով որոշված ժամկետով» բառերը, 2. 1-ին հոդվածի 2-րդ մասում՝ «կազմակերպությանն» բառի փոխարեն լրացնել «կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքով» բառերը:		
2	**Կառավարություն**	3-րդ հոդված	Հոդվածը առաջարկում ենք շարադրել ճիշտ հոլովաձևերով՝ «Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում «իրավունքով հանձնվող եւ (կամ) ամրացվող» բառերը փոխարինել «կամ անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող շարժական եւ վարձակալությամբ տրամադրվող անշարժ» բառերով:»	Ընդունվել է:	Ընդունվել է:
3	**Կառավարություն**	6-րդ հոդվածի վերնագիր	«Եզրափակիչ և» բառերը առաջարկում ենք փոխարինել է «Եզրափակիչ մաս և» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	**Կառավարություն**	6-րդ հոդված	1. Հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և	Ընդունվել է	Ընդունվել է:

			ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է սույն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև 2026 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը պետական գույքի վարձակալության տրամադրման գործընթացը կանոնակարգող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին: 2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է սույն օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մինչև 2030 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակն ապահովել մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն անհատույց օգտագործման իրավունքով հանձնված կամ ամրացված անշարժ գույքը հետ վերցնելու և համապատասխան պայմանագրերի դադարեցման գործընթացը: 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 6-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:» Վերոգրյալ փոփոխությունները կատարվել են հիմք ընդունելով 1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, 2. ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ		

			կետով սահմանված հասկացությունը, 3. Առաջարկվել է լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է» բառերը, որի նպատակն է նախագծում հստակեցնել թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում կողմից պետք է իրականացվի: 4. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի ձեւակերպումները: 5. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները փոփոխվել են՝ հաշվի առնելով գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները:		
«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1	**Կառավարություն**	Վերնագիր	«ԼՐԱՑՈՒՄ» բառը առաջարկվել է փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառով, հաշվի առնելով նախագծի բովանդակությունը:	Ընդունվել է	Ընդունվել է:
2	**Կառավարություն**	Հոդված 1	«Կառավարության» և «Հայաստանի Հանրապետության կառավարության» ձևակերպումները առաջարկում ենք նույնականացնել, ըստ այդմ «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինվել է «Կառավարության» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	**Կառավարություն**	Հոդված 2	1. «Եզրափակիչ և» բառերը առաջարկում ենք փոխարինել «Եզրափակիչ մաս և» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը: 2. 1-ին կետում առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է» բառերը, որի նպատակն է նախագծում հստակեցնել թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում կողմից պետք է իրականացվի: 3. ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկում ենք լրացնել «նորմատիվ իրավական» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը, 4. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները առաջարկում ենք փոփոխել՝ Լրացնել հետևյալ ձևակերպմամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:» հաշվի առնելով գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
**«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					

1	**Կառավարություն**	Հոդված 1	«Կառավարության» բառի փոխարեն լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը, պարբերության մեջ նույնական լինելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	Հոդված 2	1. «Եզրափակիչ և» բառերը առաջարկում ենք փոխարինել «Եզրափակիչ մաս և» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը: 2. 1-ին կետում առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է» բառերը, որի նպատակն է նախագծում հստակեցնել թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում կողմից պետք է իրականացվի: 2.1 ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկում ենք լրացնել «նորմատիվ իրավական» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը, 3. Հոդվածում ժամկետների փոփոխություն է կատարվել հաշվի առնելով գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները և կատարվելիք աշխատանքը: 4. 2-րդ կետի ձևակերպումը խմբագրել «Հայատանի Հանրապետությանը վերադարձնելու, ինչպես նաև համապատասխան պայմանագրերի գործողություն- ների դադարեցման գործընթացը»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառերի փոխարեն լրացնել «հետ վերցնելու և համապատասխան պայմանագրերի դադարեցման գործընթացը» բառերով առավել հստակեցնելու նպատակով:		
3.	**Կառավարություն**	2-րդ հոդվածի 3-րդ մաս	«ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկվել է լրացնել «նորմատիվ իրավական» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ինչպես նաեւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները փոփոխվել է՝ հաշվի առնելով աշխատանքների ծավալը և գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	**Կառավարություն**	Հոդված 1	1. 1-ին հոդվածով լրացվող նոր հոդված 29-ում կատարվել են խմբագրական փոփոխություններ՝ փոփոխվել են մի շարք բառերի հոլովաձևերը: 2. Միաժամանակ «Կառավարության» և «Հայաստանի Հանրապետության կառավարության» ձեւակերպումները նույնականացնելու նպատակով «Կառավարության» բառի սկզբից լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

2.	**Կառավարություն**	Հոդված 3	«Եզրափակիչ և» բառերը փոխարինել «Եզրափակիչ մաս և» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	Հոդված 3	1. 1-ին կետում առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է» բառերը, որի նպատակն է նախագծում հստակեցնել թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում կողմից պետք է իրականացվի, ինչպես նաև վերանայվել են ժամկետները՝ «2026 թվականի հունվարի 10-ը» բառերի փոխարեն լրացնել «2026թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը» բառերը: 2. «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «իրավական» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը. 3. «2026 թվականի հունվարի 10-ից» բառերի փոխարեն լրացնել «3-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո»: բառերով: **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին**		

			համապատասխանեցնելու ժամկետները փոփոխվել են՝ հաշվի առնելով աշխատանքների ծավալը և գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները:		
«ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	**Կառավարություն**	1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	(ամրացված) ձևակերպումը առաջարկվել է հանել՝ նկատի ունենալով, որ Նախագծում և փաթեթով ներկայացված մյուս նախագծերում կիրառվում է միայն «հանձնված» բառը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	Հոդված 6	«Եզրափակիչ և» բառերը փոխարինել է «Եզրափակիչ մաս և» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	6-րդ հոդված	1. 1-ին կետում առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է» բառերը, որի նպատակն է նախագծում հստակեցնել թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում կողմից պետք է իրականացվի, ինչպես նաև վերանայվել են ժամկետները՝ «2026 թվականի հունվարի 10-ը» բառերի փոխարեն լրացնել «2026 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			2. «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «իրավական» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը. 3. 2-րդ կետում «կոմիտեին» բառի փոխարել լրացնել «կոմիտեն պարտավոր է» բառերը՝ համապատասխանեցնելով 1-ին կետի լրացմանը: 4. «2026 թվականի հունվարի 10-ից» բառերի փոխարեն լրացնել «3-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո»: բառերը: **Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները փոփոխվել են՝ հաշվի առնելով աշխատանքների ծավալը և գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները:**		
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	**Կառավարություն**	Վերնագիր	Վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառի փոխարեն լրացնել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	««Պետական գույքի կառավարման մասին»» բառերից հետո առաջարկվել է լրացնել «ստորակետ» կետադրական նշանը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

3.	**Կառավարություն**	1-ին հոդվածի 1-ին մասից հետո լրացվող նոր 2-րդ կետ	Լրացվել է նոր 2-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. 2) բարեգործական, հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար.»:» Շարադրվել է նոր խմբագրությամբ, ինչը պայմանավորված է նշված կետում սխալ ինկորպորացումը շտկելու հանգամանքով: Ըստ այդմ կետերի համարակալումը վերանայվել է:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	**Կառավարություն**	1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ (լրամշակված 3-րդ) կետ	«հանձնված (ամրացված) բառերը փոխարինել «վարձակալությամբ» տրամադրված» բառերով:» բառերի փոխարեն լրացնել՝ ««ընթացքում» բառից հետո լրացնել «(բացառությամբ պետական կամ ենթակա պետական մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին վարձակալությամբ տրամադրված պետության սեփականությանը պատկանող հողերի անհատույց օգտագործման դեպքերի, որոնք անհատույց օգտագործման է տրամադրում պետական գույքի կառավարման լիազոր մարմինը՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգով, սույն օրենսգրքով, անհատույց օգտագործման տրամադրման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով, ինչպես նաև սույն օրենսգրքի 77-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոդվածի 1.1-ին կետով սահմանված հողերի օգտագործման դեպքերի)» բառերով: Լացման նպատակն է նախագիծը համապատասխանեցնել փաթեթով առաջարկվող հիմնական տրամաբանությանը:		
5.	**Կառավարություն**	2-րդ հոդված	Հոդվածի վերջում «բառերը» բառն առաջարկում ենք փոխարինել «նախադասությունը» բառով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	**Կառավարություն**	Հոդված 3	1. «Եզրափակիչ և» բառերը փոխարինել է «Եզրափակիչ մաս և» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը: 2. 1-ին կետում առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է» բառերը, որի նպատակն է նախագծում հստակեցնել թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում կողմից պետք է իրականացվի, ինչպես նաև վերանայվել են ժամկետները՝ «2026 թվականի հունվարի 10-ը» բառերի փոխարեն լրացնել «2026 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը» բառերը: 3. «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «իրավական» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը. 4. 2-րդ մասում՝ «2026 թվականի հունվարի 10-ից» բառերի փոխարեն լրացնել «3-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո»: բառերը: **Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները փոփոխվել են՝ հաշվի առնելով աշխատանքների ծավալը և գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները:**		
«ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1	**Կառավարություն**	Հոդված 2	1. «Եզրափակիչ և» բառերը փոխարինել է «Եզրափակիչ մաս և» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը: 2. 1-ին կետում առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն պարտավոր է» բառերը, որի նպատակն է նախագծում հստակեցնել թե սույն օրենքի կիրարկումն ապահովելու գործընթացն ում կողմից պետք է իրականացվի, ինչպես նաև վերանայվել են ժամկետները՝ «2026 թվականի հունվարի 10-ը» բառերի փոխարեն լրացնել «2026	Ընդունվել է:	Ընդունվել է:

			թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակը» բառերը: 3. «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «իրավական» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը. 4. 2-րդ կետում՝ • «կոմիտեին» բառի փոխարեն լրացնել «կոմիտեն պարտավոր է» բառերը՝ համապատասխանեցնելով 1-ին կետի լրացմանը, • «2027 թվականի դեկտեմբերի 30-ը» բառերի փոխարեն լրացնել «2030 թվականի դեկտեմբեր ամսվա երրորդ տասնօրյակն» բառերը, • «Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու, ինչպես նաեւ համապատասխան պայմանագրերի գործողությունների դադարեցման գործընթացը:» բառերի փոխարեն լրացնել «հետ վերցնելու և համապատասխան պայմանագրերի դադարեցման գործընթացը :» բառերը՝ առավել հստակ լինելու համար: 5. 3-րդ կետում՝ «2026 թվականի հունվարի 10-ից» բառերի փոխարեն լրացնել «2-րդ հոդվածի 1-ին ենթակետում նշված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց հետո:»: բառերը: Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը սույն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու ժամկետները փոփոխվել		

			են՝ հաշվի առնելով աշխատանքների ծավալը և գործընթացների իրականացման իրատեսական ժամկետները:		